

ԱՇՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գեղեցիկ է աշունը Հայաստանում: Հայաստանը ինքնին գեղեցիկ է, տարվա բոլոր եղանակներին, բայց Հայաստանի աշունը անկուգական է, անկուգական՝ իր մեղմությամբ ու հկոր շնչով, անկուգական՝ իր ներքին պայքարով: Գեղեցիկ է աշունը հատկապես իմ հայրենի գյուղում՝ Մեղրաձորում, որը գտնվում է Հայկական ՍՍՀ-ի Հրազդանի շրջանում:

Մեքենան թափով սլանում է ասֆալտապատ ուղիով: Շուրջը սարեր են, անտառներ... շուրջը Փամբակի լեռնաշղթային մաս կազմող Ծաղկունյաց լեռներն են:

Ակնապիշ հայացքս ուղղում եմ մեքենայից դուրս, նայում եմ դեպի հաստալանջ սարերն ու սվսվան անտառները: Ի՞նչ գերահրաշ է բնությունը, հատկապես իր հեքիաթային հմայիչ գույներով, որոնք հատուկ են Հայաստանի աշնանը: Սիրտդ ինքնաբերաբար թրրթռռում է, երբ նայում ես հորիզոնի վիգվաղ գծերին ու մացառներով զարդարված սարերի գագաթներին: Ամեն ինչ խորհրդավոր է, յուրօրինակ:

Ճանապարհին զուգահեռ, սուր ընթացքով և գոռում-գոչյունով վազում է աշխույժ գետակը, թեպետ տեղ-տեղ տարածվում է, դանդաղեցնում ընթացքը, նման երկար խաղից հոգնած չարաճճի երեխայի:

Այսպես խշշալով ու խոխոջալով հորդում է հիասքանչ Մարմարիկը, որի սառնորակ ծոցի մեջ բազմաթիվ փոքրիկ ձկնիկներ են խայտում, իսկ մանրիկ ալիքների վրա տարուբերվում են սպիտակավուն սագեր ու բադեր:

Հանկարծ մեքենան կտրուկ կերպով դանդաղեցնում է ընթացքը և շեղում իր ուղղությունը գլխավոր մայրուղուց: Մտնում ենք Մեղրաձոր՝ իմ հայրենի գյուղը, որի շուրջը իրենց տիտանական շուրջպարն են բռնել վեհանիստ լեռներն ու դեղնած անտառները: Թվում է, թե գոյացել է մի հսկա կաթսա, որի կենտրոնում գյուղն է՝ իր սպիտակ կտուրներով՝ թաղված պտղատու ծառերի ճյուղերի մեջ:

Անցյալ դարի սկզբին, մի բուռ հայ գաղթականներ, թողած իրենց բնօրրանը՝ Կոգովիտ գավառի նշանավոր Արծափ գյուղաքաղաքը, եկել-հաստատվել են այստեղ. վայր են դրել իրենց մատներին բոլորովին չսազող գանդիտության ցուպը, մշակել են հողը, մաքրել քարերից, ձուլվել իրենց նոր հայրենիքին, նրա բնությանը՝ դառնալով վերջինիս անբաժանելի մասը: Գյուղի շուրջը, նախկին ամայությունների փոխարեն, փռված են դեղնավուն արտերը, որոնք գյուղի մոտ ավելի ընդարձակ են, իսկ ավելի հեռուն, սարերի ու անտառների լանջերին, փոքրանում են, կրտրատվում բազմաթիվ կածաններով: Սարերի գագաթները ծածկված են սև ու գորշավուն ամպերով, որոնք պսակի նման բոլորել են հորիզոնը:

Երբ եղանակը պարզվում է, հաճելի է շրջագայել այդ կախարդական աշխարհում, հիանալ բնության պատկերով, կամ էլ տան լակից նայել դեպի հեռո՛ւ, հեռո՛ւ, դեպի դիմացի հակինթյա սարերն ու պճնամոլի պես բազմած անտառները, որոնց ոսկեփառ մորթին շողշողում է արևի ոսկեճաճանչ վարսերի ներքո, նայել դեպի գորշամանուշակագույն ամպերով պատված երկինքը, որտեղ երբեմնի վեհ, վառ ու շքեղ արեգակը հալվել է դիմադրում ձմռան անողոք հարձակմանը:

Այժմ էլ, երբ գրում եմ այս տողերը, աչքերիս դեմ հառնում են ինչ-որ բազմերանգ

գույներ, կարմիր, դեղին, կանաչ... անսովոր, պերճ ու շռայլ գույներ, գույներ, որ չեն հանդիպում նույնիսկ արաբական հեքիաթներում, բայց որոնցից ծորում է թախիծն ու տխրությունը: Երևում են ծառեր, անտառներ...

Եվ ես կասկածում եմ՝ արդյոք կարողանո՞ւմ եմ այնպես նկարագրել աշունը, ինչպես այն կա:

Ծառերը ոսկե շորեր են հագնում, իսկ տները թաղված են նրանց ոսկեճամուկ ճյուղերի տակ: Դիմացից թավուտ անտառն է, որը աշնանը նման է ոսկյա պատնեշի: Երբ բարձրանում ես այդ պատնեշի մերկ գագաթը, քեզ թվում է, թե գտնվում ես ոսկե ծովի մեջ, մի կախարդական աշխարհում, ամեհի ալիքի կատարին: Շարունակ երեսիդ են խփում ոսկե կաթիլները՝ տերևները: Իսկ եթե առաջին անգամն ես գտնվում այդպիսի բարձրության վրա, քեզ թվում է, թե ալիքի հետ միասին վայրէջք ես կատարում և, ուր որ է, անցնելու ես դիմացից եկող ալիքի տակ, կամ էլ ավելի ես բարձրանում դեպի վեր, վեր, շարունակ վեր և այն էլ ահռելի արագությամբ: Օ՜, ի՜նչ սարսափելի է: Բայց միևնույն ժամանակ որքան հաճելի է այդ սարսափը:

Շուտով սթափվում ես, և նորից քո ուշադրությունը գրավում են բնության գեղեցկությունները: Անտառը ծփում է մեղմ քամուց և իր յուրահատուկ շրշյունով երգում աշնանային մեղեդի: Դողդոջուն տերևները, որոնք կարդարել են մայր ծառերը, դողում են աշնան քամուց, իսկ ծառերը պճնամոլի պես ցույց են տալիս քամուն իրենց գեղեցիկ զարդարանքները և հպարտանում են այն ոսկեփառ, ծիածանաթև շալով, որը գցել են իրենց ուսերին: Սակայն այդ զարդարանքները, այդ ոսկե շալերը ժամանակավոր են: Տերևները լքելու են մայր ծառերին, քմահաճ քամու թեվերին բռնված՝ թռչելու են հեռո՜ւ, հեռո՜ւ, կամ էլ ընկնելու են գետին՝ սնունդ դառնալու այն ծառերին, որոնցից իրենք ծնունդ են առել: Ինչ ասած. դա է բնության օրենքը: «Ունայնություն ունայնությանց, ունայն է ամեն ինչ» (Ժողովող, Ա, 2): Սնունդ կդառնան, որպեսզի հաջորդ տարին դուրս գան նոր, ավելի գեղեցիկ, ավելի հմայիչ տերևներ:

Ակամա մտաբերում ես Իսրայելի հզոր արքայի՝ Սողոմոն Իմաստունի խոսքերը.

«Մի ազգը գնում է, մյուսն է գալիս, բայց
երկիրը կանգնած է հավիտյան:
Արևը ծագում է, և արևը մայր է մտնում,
դեպի իր վայրն է շտապում նորից,
և այնտեղ կրկին ծագում:
Քամին գնում է հարավ, դեպի հյուսիս
դառնում, դառնում-գնում է քամին
և շրջադարձով կրկին ետ գալիս:
Բոլոր գետերը դեպի ծով են վազում, բայց
ծովը չի լցվում, որտեղից որ հոսում են
գետերը. նորից այնտեղ են դառնում,
որպեսզի նորից հոսեն» (Ժող. Ա. 4—7):

Ճիշտ է, թերևս անսահման է ինքնին բնությունը, սակայն բնության մեջ ամեն ինչ իր սահմաններում ունի իր սկիզբը և վերջը: Կծաղկեն նոր ծառեր, կծնվեն նոր տերևներ...

Բայց ոչ, դեռևս վրա չի հասել օրհասը: Դողդոջուն տերևները դեռևս կշարունակեն հմայել մարդկանց ու գեղեցկացնել բնությունը իրենց շքեղ, վառ ու թախծոտ գույներով:

Այո, աշունը Հայաստանում շատ է հետաքրքիր ու հմայիչ: Նույնիսկ գիշերները ուշադրություն չդարձնելով, որ ոսկորներդ է թափանցում սառը օդը, հիանում ես աստղաբիր երկնքով, որտեղ լուսինը, ինչպես դրախտի չքնաղ, լուսավոր փերի, իր թրթռուն հայացքով լուսավորում է շրջակայքը, և նրա կաթնագույն մշուշի մեջ հպիվ նշմարվում են արծաթին տվող բարդենու տերևները, որոնք դողում են թեթև կեփյուռից:

Իսկ գյուղից հյուսիս մեռյալ ամայություն է, որտեղ ամեհի, վայրագ հողմերն են թագավորում: Ամենուր մերկ սարեր են ու պլնձե ժայռեր, այդ սարերի մեջ՝ ասես մատներով փորված ձորեր:

Զգացվում է ձմռան ծանր շունչը: Ուշ աշուն է, ոսկյա աշուն:

Եվ զարմանում ես՝ ինչպիսի՜ վարպետությամբ, ինչպիսի՜ ներդաշնակությամբ է բնությունը, առանց աչք ծակող գծերի, միմյանց կողք դրել շռայլն ու մելամաղձոտը, հեզն ու շքեղը: Եվ ինչպե՞ս կարող ես այդ բոլորը դիտելուց հետո չհավատալ, որ այդտեղ խառն է Արարչի կարգավորող Ձեռքը:

Այո՛, խորհրդավոր է բնության թագավորությունը: Բայց նրա անհմանալի խորհուրդների մեջ մենք տեսնում ենք այն ճարտար ձեռքը, որը կյանք է տվել այդ բոլորին: Ինչպես ասել է սաղմոսերգուն՝ «Երկինք պատմեն զփառս Աստուածոյ» (Սաղմոս, ԺԸ 2): Դիտելով բնության հրաշալիքները, մենք փառք ենք տալիս Արարչին, փառք ենք տալիս Իր կատարյալ ստեղծագործության համար, փառք ենք տալիս Իր կարգավորիչ տնօրինության համար:

Ե դարի հայ մեծ փիլիսոփա-աստվածաբան Եղնիկ Կողբացին էլ, դեմ դուրս գալով հին հեթանոսական կրոնական ուսմունքներին և նրանց գաղափարախոսներին, որոնք պաշտում էին բնությունը և բնական երևույթները՝ որպես աստվածություններ, դրանց ետևում չտեսնելով ճշմարիտ Աստուծո Էությունը, նը-

շում է, որ «Եւ մեք ոչ անարգեմք զնոսա, և որ պաշտօն մատուցանեմք նոցա. այլ հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիչն նոցա և զյօրինիչ, զի մեզ ի պէտս են, և կարգչին իւրեանց ի փառս»:

Իսկապես, չկա արդյունք՝ առանց պատճառի, չկա արվեստ՝ առանց արվեստագետի: Բնությունը, որպես Աստուծո ստեղծագործության արդյունք, իր կատարելությամբ, իր ներքին համաչափությամբ իսկապես մի արվեստ է, յուրահատուկ, անձեռակերտ արվեստ, որին չենք հանդիպի ոչ մի նկարչի կտավներում: Այո, մեծ արվեստագետ լինելու համար նախ պետք է հասկանալ բնությունը, ապրել այն, և ապա միայն բառերով, ներկով կամ հնչյուններով, մուրճով կամ գրիչով կրկնօրինակել այն՝ տալով գեղարվեստական մեկնաբանություն: Այստեղ ցանկանում եմ մեջ բերել գերմանացի մեծ մտածող, նշանավոր բանաստեղծ Գյոթեի խոսքը.

«Ոչ մի նշանավոր արվեստաբան չի ցանկանում իր ստեղծագործությունը դնել բնության ստեղծագործության կողքին կամ նույնիսկ նրա տեղը. բոլոր նրանց, ովքեր այդպես կվարվեն, պետք է իբրև կիսակատար արարածների արտաքսել արվեստի թագավորությունից և չընդունել բնության թագավորությունը»:

Անսահման է բնության թագավորությունը: Պետք է միայն հասկանալ այն, սիրել ու գուրգուրել: Պետք է միայն պահպանել այն, կգալ ու հաղորդվել:

ՇՆՈՐՀՔ ԱԲԵՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ